

1700-ԱՄՅԱԿԻ ՆԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված հոբելյանական գլխավոր հանդիսություններին մասնակցելու նպատակով աշխարհի քաղաքներ երկրներից Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին ժամանել բույր Եկեղեցիների պետեր ու ներկայացուցիչներ, Հայաստանյայց Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, հոգևոր ներկայացուցիչներ, թեմական վարչությունների անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, ազգային-հասարակական գործիչներ և այլ հյուրեր: Նրանք եկել էին մեզ հետ հաղորդակից դառնալու սրբազան արարողություններին և միասնաբար աղոթելու հանուն մեր Եկեղեցու և նորանկախ Մայր Հայրենիքի շինության ու պայծառացման:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման գլխավոր հանդիսություններին՝ ի մասնավորի Սրբալույս Մյուռնոսի օրհնության և Երևանի նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու օծման արարողություններին մասնակցելու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ն, Նոյիկ Մալաբար Եկեղեցու պետ, Արևելքի Կաթողիկոս և Մալանկարայի Պատրիարք, Նորին Սրբություն Բասիլոնո Մար Թովմա Մարթենո Բ-ն, Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Նույն Ուղղափառ Պապ և Պատրիարք Պետրոս Է-ն, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պետ, Բուխարեստի Արքեպիսկոպոս, Ունգրո-Վալախիայի միաբնակային, Նորին Սրբություն Թեոֆիլոս Ա-ն, Անգլիկան Եկեղեցու պետ, Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերին, պապականություններ Ղապրի, Ասորի, Վրաց, Սերբիայի և Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցիներից, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պապականությունը, ներկայացուցիչներ ԱՄՆ-ի Եպիսկոպոսական, Դանիայի Լյութերական և Գերմանիայի Ավետարանական Եկեղեցիներից:

Հանդիսություններին մասնակցում էին Հայ Կաթոլիկ և Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչներ, Մխիթարյան միաբնության հայրեր: Նյութերի թվում էր նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար և Եվրոպական Եկեղեցիների Խորհրդի ներկայացուցիչ Կոնրադ Ռայգերը:

Հայաստան էին ժամանել Հայոց Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալները՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Ս. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Ս. Մեսրոպ արքեպս. Մուրաֆյանը՝ իրենց շքախմբերով, ինչպես նաև Հայոց Եկեղեցու թեմերի թեմակալ առաջնորդներ, Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր:

Մեկտեմբերի 20-ին Ն. Ս. Օ. Ս. Ս. Գաբրիել Բ Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ օծվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորակառույց Բաց Խորանը,



«ԱՌԱՔԵԼՈՅ ԱՂԱԽԻՈՅ»



Խորհրդակցություն խորհրդակցություն և զորություն

որը սպացավ «Ս. Տրդատ» անվանումը: Հավարտ օծման արարողության Տ. Ոսկան արքեպս. Գալփաթյանը մատուցեց անդրանիկ Ս. Պապարագը նորածն խորանում:

Ս. Տրդատի կամարաձև խորանի առջև փարածվում է մի ընդարձակ բաց փարածություն, որտեղ բազում հավաքացյալներ հնարավորություն կունենան մասնակցելու սրբազան արարողություններին: Խորանն ունի շուրջ 14,5 մ լայնություն և 17,5 մ բարձրություն:

Ս. Տրդատի Խորանին կից կառուցվել է նաև 22 մ բարձրությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր գլխավոր կամարաձև մուտքը՝ հենված չորս սյուների վրա, որը կրում է Ս. Գրիգոր Լուսավորչի անունը: Դեմ դիմաց գտնվող երկու սյուները միմյանց են միանում հայոց առաջին Կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսավորչի և հայոց առաջին քրիստոնյա արքա Տրդատ Գ-ի հարթաքանդակներով, որոնք իրենց աջ ձեռքին կրում են հաղթական Սուր-Խաչ: Մյուս երկու սյուների վրա պատկերված են Հայաստանում առաջին քարոզիչների՝ Ս. Թադևոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների հարթաքանդակները:

Այս երկու կոթողները վեր են խոյացել ճարտարապետներ Զիմ Թորոսյանի ու Ռոմեն Զուլհալյանի նախագծով և բարերարությամբ փիկին Լուիզ-Միմոն Մանուկյանի ու Կրեյ և փիկին Սենիկ և Անահիտ Գևորգյանների:

Սեպտեմբերի 21-ին, առավոտյան ժամը 8.30-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ Մայր Աթոռի միաբանությունը և Ս. Էջմիածին ժամանած քույր Եկեղեցիների հոգևոր պետերն ու պատվիրակությունները ուխտագնացության մեկնեցին Խոր Վիրապ, ուր Չարհարանաց գրից դուրս բերված լույսով վառված մոմերը բաժանվեցին մասնակիցներին: Ամենայն Հայոց Հայրապետը և քույր Եկեղեցիների հոգևոր ներկայացուցիչները աղոթք վերառաքեցին առ Աստված՝ հայցելով Տիրոջ խաղաղությունը համայն աշխարհին, սեր և համերաշխություն՝ բոլոր ժողովուրդներին:

Վեհափառ Հայրապետը 1700-ամյակի այս մեծ հոբելյանի առիթով հավաքվածներին ուղղեց իր պատգամը՝ ասելով.

Սիրեցյալ հոգևոր և իշխաններ ի Զրիարոս.

Ուխտավորի քայլերով և օրհներգությունը մեր հոգում կելի ենք Խոր Վիրապ՝ քրիստոնեական աշխարհի հնագույն սրբավայրերից մեկը, որտեղ արգելափակության և Աստուծո հետ մեկության 13 տարիներ ապրեց Հայոց Սուրբ Գրիգորը: Արարարի լանջին փորված խորխորտ փխրապտու՝ մարդկանցից մերժված ու հալածյալ, ապրեց Արարարի վրա Նոյի փրկության հավատով, Աստուծո Սիրո ու Խոստումի վստահությամբ: Բանալը դարձավ առ Աստված հավատարմության վկայարան, Աստուծո ներկայության բնակարան, որի առջև ամենախորին խոնարհումով աղոթախոս է հայոց հոգին:

Եղբայրասեր աղոթքով այսօր եկել ենք այստեղ՝ Լուսավորչի Վիրապի առջև միասնաբար ծառայական մեր ուխտը նորոգելու: Եկել ենք ներքև նախելու և երկինքը տեսնելու:

Միջեկի հոգևոր եղբայրներ, այստեղից 1700 տարիներ առաջ Աստվածային Լույսը համարաբար ճառագեց հայոց երկրում: Մահապարտի գուրը զերեզման լինելով՝ դարձավ աստվածաճանաչ հոգու լուսե խորան, ծննդավայր հայոց համար: Եղավ Հավերժական Լույսի մշտաբնակ սրբարան, ուր նապոդը տեսնում է շղթայված քրիստոնեության աքաղաղայրն ու արքայավայրը՝ հայացքի առջև հայոց համազգային մկրտության ոսկեկնիք պարմությոնը, որը պայմանավորեց Հայաստանի ու հայ ժողովրդի հեղուգալ դարերի Զրիստոսանվեր ոգին:

Ինչպես ավանդում են մեր պարմիչները, Գրիգորը Կեսարիայում մանկուց դաստիարակվել ու սնվել էր քրիստոնեական միջավայրում՝ իր հոգում կրելով Ավետարանի լույս պարզամտները: Վերադառնալով Հայաստան՝ նա պաշտոնի է կոչվում հայոց Տրդատ Մեծ թագավորի արքունիքում և իր ծառայասիրությամբ արժանանում արքայի վարսախությանը, իր առաքինությանը վստեղում պարսպախանների հարգանքը և զինվորների սերը: Գրիգորի ծածուկ հավատքը շուրով հայրնի է դառնում Տրդատ թագավորին, որը Հայաստանն ազատագրելու հաղթական մարտեր էր մղում: Արքան, որքան էլ համակրանք ունենար Գրիգորի նկատմամբ, չի հանդուրժում, որ նա հրաժարվում է փառքանակ հեթանոս չափավածներին:

Չհասկանալով Գրիգորի համատությունը, Տրդատ արքան նրան ենթարկում է տանջանքների և, ի վերջո, մոլեգնած՝ կարգադրում ներել մահապարտների համար նախատեսված վիրապը: 13 տարի ցուրի ու տոթի պայմաններում, թունավոր աղոտների հարևանությամբ աղոթքով ապրեց Զրիստոսի մեծ վկան և անհար սրտով հայցեց Բարձրյալից. «Ըո բարերար շնորհներով գթա Ըո արարածներին և մեր Հայոց աշխարհը, որպեսզի սրանք ևս ճանաչեն Բեզ և Ըո Միածին Որդուն՝ մեր Տեղ Դսուս Զրիստսին»: Աստված խնամեց և մտքի սթափությամբ ու պայծառությամբ, հոգու կորովով պահպանեց Գրիգորին, ով պիտի դառնար երկրորդ Լուսավորիչը հայոց, ով պիտի լույսի առաքությամբ շողալուեղ կանթեղները հավառի՝ Հայաստանում Սուրբ Թադևոս և Բարդուղիմեոս առաքյալների ձեռքով վառված և դեպի Արածանիի՝ մյուռոնով ջերմացած ջուրն առաջնորդեր հայ ժողովրդին: 301 թ. Հայաստանը դարձավ առաջին քրիստոնյա պետությունը աշխարհում:

Միջեկի եղբայրներ մեր, 2001 թ. առաջին ժամերին Մենք Հայ Եկեղեցու հոգևոր դասի և աշխարհական բազմահազար ժողովրդի հեղ ուխտի եկանք Խոր Վիրապ և այստեղ վառեցինք մեր կանթեղները՝ աղոթքով, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը 1700 տարիներ անց բարեխոս լինի Զրիստոսի որդեգիր ազգիս, որպեսզի Աստծո օգնությամբ մեր ժողովուրդը շարունակի ապրել Ավետարանի լույս պարզամտներով, նոր հազարամյակ մուրթ

գործի՝ զորացած Աստվածային Միությունը ու հարության հավատով, որ մեր նախնիք որպես ամենաթանկ ժառանգություն պարզամեղին սերունդներին: Մեր ժողովրդի ավանդության համաձայն՝ հայոց երկնքից անպարսև կախված է Լուսավորչի մշտավատ Կանթեղը, ուր յուրի փոխարեն վառվում են սրբի արցունքները, և նրանք, ովքեր հավատում են մաքուր սրտով ու անկեղծավոր հավատով, կարող են տեսնել այդ անմար Կանթեղը Արագած լեռան քառագագաթ բարձունքին: Խոր Վիրապում վառած լույսերը Լուսավորչի մշտավատ Կանթեղի խորհրդով տարվեցին հայ Եկեղեցու բոլոր թեմերը, որպեսզի ազատ մեր հայրենիքում և համայն հայոց Միությունում նախնիաց մեր սուրբ հավատը վերստին լուսավորի մեր կյանքը և առաջնորդի դեպի հայ Եկեղեցու Լուսն Խորանը, որ «դեպի Աստուած բարձրացող գաղտնի ճամփա մը ունի»:

Սուրբ ու նվիրական այս վանքի հարկից ներս միասնությունը մեր աղոթքները 1700 տարի այսրեղ հեցած բյուրավոր աղոթքներին և վերստին հայցեմք Քրիստոսի խիզախ վկայի բարեխոսությունը, որ Սուրբ Հոգու շնորհով համայն աշխարհում բարի պտուղներ տան երկնապարզ Նույսը, Սերն ու հավատը, և պետությունների, ժողովուրդների ու մարդկանց հարաբերություններում իշխի հաճության ու բարի կամեցողության շենացնող ոգին:

Հայցեմք Բարձրալից, որ անաստան պահի քրիստոնեական Եկեղեցիները և նրանց միջև՝ եղբայրական սերն ու համագործակցությունը այժմ և միշտ և հավիտյան:

Թող մեր ուխտը ընդունելի լինի Աստծուն. ամեն:

Այա Ղեղիկ Մալաբար Եկեղեցու պետ, Արևելքի Կաթողիկոս և Մալանկարայի Պապրիարք, Նորին Սրբություն Բասիլեոս Մար Թովմա Մաթթեոս Բ-ն Գվեց իր պարզամը՝ հորդորելով անաստան մնալ Քրիստոսի հավաքին և առաջնորդվել Տիրոջ պարզամներով:

Արարողությունն ավարտվեց միասնաբար արտասանված Տերունական աղոթքով:

Ուխտավորաց խումբը, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, ժամը 10-ին մեկնեց Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի փութը մատուցելու 1915 թ. անմեղ գոհերի հիշարակին:

Հոգեհանգստյան արարողության վերջում Ամենայն Հայոց Հայրապետի աղոթքին միացան նաև Ղեղիկ Մալաբար Եկեղեցու պետ, Արևելքի Կաթողիկոս և Մալանկարայի Պապրիարք, Նորին Սրբություն Բասիլեոս Մար Թովմա Մաթթեոս Բ-ն, Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Պապրիարք Պետրոս Է-ն և Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պետ, Բուխարեստի Արքեպիսկոպոս, Ունգրո-Վալախիայի միաբնակից, Նորին Սրբություն Թեոֆիլոս Ա-ն՝ Տիրոջից հայցելով խաղաղություն և հոգու հանգստություն Մեծ Եղեռնի նահապետների համար: Վեհափառ Հայրապետը շնորհակալության խոսք ուղղեց այն բոլոր հոգևոր պետերին ու ժողովուրդներին, որոնք ընդվզումի ծայն են բարձրացրել՝ դապապարկե-

լով հայոց Եղեռնը: Նորին Սրբությունը նաև վարածություն հայտնեց, որ առաջիկա տարիներին ողջ մարդկությունը կմիանա այդ ձայնին, որպեսզի աշխարհի ոչ մի անկյունում նման ողբերգություն այլևս չկատարվի:

Հոգեհանգստյան արարողությունից հետո բոլոր ներկաները այցելեցին հայոց Ցեղասպանության թանգարան:

Երեկոյան ժամը 18.00-ին, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, 1700-ամյակի եկեղեցական հանդիսություններին մասնակից հոգևորականները Կաթին Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում մասնակցեցին հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի և հայաստանի Հանրապետության անկախության 10-ամյակի զույգ հոբելյաններին նվիրված պետական հանդիսությանը:

Հոբելյանական այս հանդիսության ընթացքում Վեհափառ Հայրապետը Կվեց իր պարգամը՝ «Զի Աստուած ընդ մեզ է...» բնաբանով (տես էջ 23):

Մեպարեմբերի 22-ին, առավոտյան ժամը 9.45-ին, «Հրաշափառ» շարականի հրնչյունների ներքո դեպի Մայր Տաճար ուղղվեցին Վեհափառ Հայրապետը, Մեծի Տաննը Կիլիկիո Կաթողիկոսը, քույր Եկեղեցիների պետերն ու ներկայացուցիչները՝ միջեկեղեցական արարողությամբ մեկ անգամ ևս ոգեկոչելու 1700-ամյա հոբելյանը, ինչպես նաև առավել ջերմացնելու արդեն իսկ հաստատված փոխադարձ սիրո և վստահության ջերմ հարաբերությունները:

Հաջորդաբար աղոթեցին հոգևոր առաջնորդները, այդ թվում նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի քարտուղարը՝ մեր բոլորի Տիրոջից խնդրելով սեր և խաղաղություն համայն աշխարհի ազգերին ու ժողովուրդներին, նաև դարապարպելով վերջերս Ամերիկայի Միացյալ Նահանգներում կատարված աննախադեպ ահաբեկչությունը, որ հազարավոր անմեղ մարդկանց կյանք խլեց:

Այնուհետև խոսք ասաց Ամենայն հայոց Հայրապետը:

Միրեցյալ հոգևոր եղբայրներ ի Զրիստոս.

Ամենայն հայոց Հայրապետության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1700-ամյա Տաճարում, Միածնի Իջնան Սուրբ Սեդակի առջև, կրկին սիրո Մեր ողջույնն ենք բերում Ձեզ՝ հայ Եկեղեցու մեծ հոբելյանի և հայաստանի անկախության 10-ամյակի ողջ բերկրանքով, որ ապրում է համայն մեր ժողովուրդն այսօր:

Սուրբ Էջմիածնի անվան հետ են կապված հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման և հայ ժողովրդի համազգային մկրտության նվիրական հիշարարկները: «Էջմիածին», որ անունն է այս արքայական, նշանակում է Աստուծո Միածին Որդու Իջնան վայր: 301 թ. մեր Տեր Հիսուս Զրիստոս այսպեղ հայրենակց Սուրբ Գրիգոր Լուսավորչին, ուր և նորադարձ մեր ժողովուրդը կառուցեց իր Մայր Տաճարը՝ իբրև Մայր Աթոռ՝ Կաթողիկոսանիստ կենտրոն հայ Առաքելական Եկեղեցու: Հաստատված Աստվածային Էջբով և կրելով հայ կյանքի մեծագույն իրադարձության՝ հա-

յոց Մեծ Դարձի խորհուրդը, Սուրբ Էջմիածինը Սրբություն Սրբոցն է աշխարհաափյոտ հայ ժողովրդի՝ նույնիսկ այն ժամանակներում, երբ Կաթողիկոսական Աթոռը, թշնամյաց հարձակումների պայմաններում, հանգամանքների դժբախտ բերումով, սրիացված է եղել տեղափոխվել այլ բնակավայրեր պարմական հայապատանի և Կիլիկիո հայոց թագավորության: Սուրբ Էջմիածնից հեռու հայոց հայրապետներն զգացել են իրենց տառապիչ ու վշտաբեր: 1441 թ. Ամենայն հայոց հայրապետական Աթոռը վերադարձվել է Աստվածակառույց Սուրբ Էջմիածին և այստեղ է այդ ժամանակից ի վեր:

Առաքելախառնար հայ Եկեղեցուց և նրա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ճառագող Աստվածաճանաչ լույսով և ինքնության խորհրդով կերտվել է քրիստոնեական հայրուստի հայ մշակույթը: Դարերի մեջ և այսօր էլ հայ Եկեղեցին և նրա Մայր Աթոռը ազգահավաք դերակատարություն ունեն հայ ժողովրդի կյանքում: Ազգային պետականության կորստի ժամանակներում հայ Եկեղեցին իրականացրել է ոչ միայն հոգևոր առաջնորդության իր առաքելությունը, այլև կրել պետականության պարտականությունները, ներկայացրել ու պաշտպանել հայ ժողովրդի շահերը՝ ծնողի հոգածությամբ օրինության իր թեկեր սփռելով իր զավակների վրա համայն աշխարհում:

հայ Եկեղեցին ազգային Եկեղեցի է: Իր ազգային բնույթին համարժեք ուժեղ ու ամուր է նաև նրա էկոմենիկ ոգին՝ դրսևորված ծեսում, աղոթքներում, պարմության քաղմարթիվ օրինակներում: Քրիստոնեական քույր Եկեղեցիների հետ եղբայրական սիրով համագործակցության ջարդագով ու իրականացնող էին Մեր նախորդ հոգևորյա հայրապետները: Անցնող դարում, երբ Քրիստոսի Եկեղեցու միության ջերմ ձգտումը մարմնավորվեց որպես վարչական կառույց՝ ի դեմս Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, էկոմենիկ շարժմանը գործուն մասնակցություն բերեցին երջանակահիշարակ Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն հայոց Կաթողիկոսները: Այսօր ուրախությամբ ենք ընդգծում, որ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Արեւմտական բարձր պաշտոնն է զբաղեցնում Մեր սիրեցյալ եղբայր Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը:

Վազգեն Ա և Գարեգին Ա հայրապետների ողնկիջ ճանապարհներով առաջնորդվելով, հայրապետական Մեր գահակալության առաջին տարում Մենք այցելություններ կատարեցինք մեր քույր Եկեղեցիների հոգևոր պետերին՝ հավասարելու Մեր եղբայրական սերը, ամրապնդելու մեր Եկեղեցիների բարեկամությունը և արտահայտելու սերը համագործակցության՝ հայ Եկեղեցու պարտապարտականությունը: Եղբայրական ողջույնով Մենք այցի ենք գնալու նաև այն քույր Եկեղեցիներին, որոնց ժամանակի պարճառով չկարողացանք այցելել: Ինչպես դարեր ի վեր, այսօր էլ հայ Եկեղեցու համար հիմնորոշ է «Միության ի կարևորու, ազատության յերկրայական և սեր յամենայնի» սկզբունքը: Եվ այսօր Մենք փառք ենք բարձրացնում առ Աստված, որ ի Քրիստոս մեկ հավատով, եղբայրական սիրո աղոթքով հա-

վաքել է մեզ Սուրբ այս հաշիկից ներս: Թող Տերը օրհնի սիրո և միասնակա-
նության հանդիպումը մեր՝ ի դեմս քույր Եկեղեցիների հոգևոր պետերի ու
ներկայացուցիչների: Թող մեր սերը հավատարմորդ գործերի փոխվի՝ հա-
նուն աշխարհում խաղաղության ու եղբայրասիրության հաղթանակի՝ աչ-
սօր և միջր և հավիտյան. ամեն:

Էկումենիկ արարողությունից հետո, ժամը 11.00-ին, բարձրաստիճան հոգևոր
հյուրերը Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ ուղղվեցին Վեհարանի հան-
դիսասրահ, որպեսզի փնտռեն ունեցավ բարիգալստյան արարողություն:

Արարողության ընթացքում 1700-ամյա հոբելյանը արժևորեցին քույր Եկեղեցի-
ների պետերը, որից հետո բոլոր ներկաներին իր ողջունի խոսքն ուղղեց Ամենայն
Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն.

«Նա աղաք գմեզ եւ ոչ մեր էաք, մեր
ժողովուրդք եւ խաչն աքօրի կորաւ»:
(Սաղմոս ԴԹ. 3)

Միջոցի հոգևոր եղբայրներ.

Միտով ողջունում ենք Ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Փա՛ղք Ամե-
նակալ Բարձրալիկն, որ համախմբել է մեզ՝ որպես անդամներ Զրիարոսի
մեկ և նույն մարմնի, Հայ և Լեդհանրական Եկեղեցու կյանքի կարևոր իրա-
դարձության՝ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման
1700-ամյակի տոնահամբության առիթով: Մեծապես շնորհակալ ենք, սիրելի
հոգևոր եղբայրներ, որ մեզ հետ եք, խնդակից ու ուրախակից մեզ, և մենք
միայնակ չենք մեր ուրախության մեջ: Ձեր ներկայությունը գորացնում է
մեզ, առավել բազմապատկում մեր խնդությունը և առաջացնում ցնծությու-
նը երկնքում: Զրիարոսի սիրո մեջ լինել համախումբ և համախորհուրդ՝
Տիրոջ պարգևն է մեզ. «Զի՛ բարի եւ զի՛ վայելուչ զի բնակեն եղբարք ի
միասին» (Սղմ. ԾԼԲ 1):

Թող մշտապես ներշնչող լինի հոգևոր առաջնորդներին համար Պողոս
առաքյալի մարդկային մարմնի համաքանությունը, առավել եւս այս դարա-
շրջանում, երբ տակավին աշխարհի շար կողմերում արեւից խոփեր չեն
ձուլվել, և չի դադարել հրատեղների որոտը, երբ մարդկության կյանքում
գիտական ու տեխնիկական առաջընթացի հետ՝ գրոյվող ձյան գնդի նման,
առաջանում ու մեծանում են հրապապ լուծումներ պահանջող հիմնախնդ-
րներնրը, և Եկեղեցիներն կանգնած ենք դրանց համարժեք պատասխան-
ներ գտնելու անհրաժեշտության առջև: Նրանախնդիրներից շարերը տեղա-
կան, միջավայրին բնորոշ առանձնահատկություններով դրսևորվում են
յուրաքանչյուրին կյանքում: Մեր Եկեղեցին շուրջ 2000 տարիների ուղի է
անցել, և նրա ընթացքը հարկորոշվել է որպես հավատարմություն առ
Աստված: Մեր պատմագրությունը, իրավամբ, «մարտիրոսագրություն» է:



Էկոնոմոսն Կ. Աղթարի Մասնակիցները Վեչարանով

Տավարաւոր մեր զաւակները հաճախ, որպէս հաւատքի գին, իրենց արյունն են վճարել: Փա՛ռք Բարձրալին, այսօր հերոնում են մնացել հալածանքներն ու բռնությունները, ավերն ու արցունքը: Ազատ ու անկախ Տասարանի պերտության հովանու ներքո Հայ Եկեղեցին լծվել է Բանին Կենաց քարոզչության առաքելությանը, համայնաւարական անասարկածության տարիների ավերի աստիճանական հաղթահարմանը: Եկեղեցի-պերտություն հարաբերությունների կանոնակարգման գործընթացի արդյունքում Մայր Աթոռին են վերադարձվել նախկին հասարակարգի տարիներին Եկեղեցուց հանիրաւի բռնագրավւած Եկեղեցիներ ու վանքեր, եկեղեցաւարկան կալվածքներ: Ինչպէս մեր բոյր Եկեղեցիները, որոնք վերապրեցին համայնաւարական ասարկածներժողովրդական տարիների աստաւիշ, Հայ Եկեղեցին ևս քարոզչական-դաստիարակչական, եկեղեցաշինական և նոր սերնդի պատրաստության ոլորտներում ակտիւ գործունեություն ծաւալելու հրամայականի առջև է: Վերջին շրջանին լույս ընծայված կրոնա-եկեղեցագիտական բազմապիսի հրատարակությունները, կրոնից ուսուցման հաստատված լսարանները, նորոգված վանքերն ու կառուցված եկեղեցիները թեն թեթևացնում ու մեղմում են սրեղծված կարիքները, բայց և այնպէս հենու են բաւարար լինելուց: Սոցիալական չհաղթահարված կարիքները՝ չքավորությունն ու գործազրկությունը և բարոյական չափանիշների արժեզրկումը, որոնք աշխարհը հուզող հիմնահարցեր են, այսօր նաև մեր մտահոգության առարկան են:

Մեր Եկեղեցու առջև ծառացած հիմնահարցերից կարևորագույնը շարունակում է մնալ համայնքային կյանքի ձևավորման խնդիրը, որի կենսագործումը հրաւրաւ է նաև Հայաստան ներթափանցած աղանդների ավերիչ գործունեությունը կասեցնելու առումով: Այս իմաստով էական է հարկաւ պէս ընտանիքներից ներս իրականացվող հոգևոր դաստիարակության աշխուժացումը, քանզի հայ ժողովրդի կենսականությանը պարւարող կարևորագույն հաստատություններից մէկը Եկեղեցու և դպրոցի հետ եղել է մնում է ընտանիքը: Մենք, որպէս Եկեղեցի, չենք կարող անտարբեր լինել կարևորագույն այս պայմանի նկարմամբ: Մեր Եկեղեցու հայրերը դարերի մեջ բարեսիրական ու հոգևոր-դաստիարակչական քարքեր հաստատություններ են հիմնել՝ նպարակ ունենալով օգնության ձեռք մեկնել կարիքավորներին, վերացնել աղքատության չարիքը և մարդկանց հոգիներում սերմանել քրիստոնեական բարոյականության հունդերը: Հաւարարիւ իր կոչմանը, Հայոց Եկեղեցին սահմանափակ իր կարելիություններով և սակաւ իր եկեղեցականներով իրականացնում է իր առաքելությունը հիշյալ ոլորտներից ներս:

Նշված խնդիրները, որոնք, վստահաբար, առաւել կամ նվազ չափով առկա են նաև մեր բոյր Եկեղեցիներում, այլևս տեղ չեն թողնում ինքնամեկուսացման ձգտումներին, և անհրաժեշտություն են դարձնում գործակցությունն ու փոխաջակցությունը: Մեր գոհունակությունը և շնորհակալություն

ներն ենք հայտնում, որ ինչպես միշտ, այնպես և անցած տարւոյ տարիների ընթացքում զգացել ենք այդ ոգու դրսևորումը քոյր Եկեղեցիների կողմից, հասկնալան երիտաւարոյ սերնդի պարտաւարման ու սոցիալական զար-
գացման ծրագրերի խթանման ոլորներում: Երիտաւարոյ մեր եկեղեցու-
կաններից ոմանք արդէն իսկ կրոնագիտական իրենց իմացութունն են կա-
տարելագործում արտերկրի տարբեր համալսարաններում, իսկ Տալաս-
տանի մի շարք շրջաններում քոյր Եկեղեցիների հարկացրած միջոցներով
իրականացվում են տնտեսական զարգացման զանազան ծրագրեր: Մեզ
համար սիրո և փոխօգնութան այս պարտաւարականութունն է կրումենիզ-
մի ճշմարիտ ոգին, որի ականաւորն էր դարձանք Մեր այցերի ընթացքին,
երբ եղանք Տերունական երկրում, Ռոսաւարանում, Ռումինիայում, Եգիպ-
տոսում, Եթովպիայում, Վրաստանում, Վարիկիանում՝ ամենուր վայելելով
հոգևոր մեր եղբայրների անկեղծ սերն ու հարգանքը: Զգացիք Եկեղեցու
համարական ուժը, բարոյական հսկայական հեղինակությունը և ցանկա-
ցած խոջընդոր հաղթահարելու նրա ներունակությունը: Վարսահ ենք, որ
փոխայցելութունների ու շփումների շարունակականությունը նոր ու խոս-
տովնալից հեռանկար է բացելու մեր առջև, որպեսզի մենք՝ իբրև Եկեղեցի-
ներ, մեր ընդհանրությունների շեշտադրման ճանապարհով ընդառաջ ե-
լենք ժամանակի մարտահրաւիրներին: Մենք կարող ենք, որպես քրիս-
տոնյա Եկեղեցիների առաջնորդներ, մեր աղոթքների ու ձայների միա-
խառնմամբ, ձեռք-ձեռքի սգուցմամբ միասին գործել՝ հանուն ալելի մի լավ
աշխարհի սրելոման:

Մեր շնորհակալութունն ու եղբայրական սերն ենք վերաբերել բերում
Ձեզ բոլորիդ Մեր հրաւերին ընդառաջելու, Տայոց Եկեղեցու հորելյանա-
կան այս տունին Ձեր ներկայութեամբ առաւել հանդիսաւորութուն հաղոր-
դելու և այն իր համաքրիստոնեական տարողութեան մեջ արժանւոյնա
պանծացնելու համար: Աղոթում ենք, որ Երկնաւոր Տերը ժամանակի հեր
ամրապնդի ու զորացնի ի Բրիտոս եղբայրութեան մեր ոգին, բոլոր միա-
թարութուններ պարզի համարաւոր Իր հորին՝ ի պայծառութուն Ընդ-
հանրական և Լոսբերական Սուրբ Եկեղեցու և ի փառս Ամենասուրբ Եր-
րորդութեան՝ այժմ և հաւիտյանս. ամեն:

Արարողութեան վերջում, իբրև եղբայրական սիրո ջերմ արտահայտություն, տե-
ղի ունեցավ նվերների փոխանակում:

Բարիգալստյան արարողությունից հետո, ժամը 13.00-ին, Ս. Տրդաւա Բաց Խո-
րանի վրա մարտցվեց ուխտաւորաց Պապարագ: Օրվա պարարագիչն էր Բրագի-
լիայի թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը:




ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼՈՒՏԱՎՈՐՉԻ ԱՋՈՎ ՕՐՀՆՈՒՄ Է
1700-ԱՄՅԱԿԻ ՄՅՈՒՌՈՆԸ

ՅԳԿԻՍՅԷ ՍԽԻՐԻՏՈՒՄ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵՔԵՂՈՍԵՍՈՍՈՒՆԻ ԵՔԵՂՈՍԵՍՈՍՈՒՆԻ ԵՔԵՂՈՍԵՍՈՍՈՒՆԻ





(մտկոյնում վնէ Լուսնոյ Դոյն Գ. Գ. Գ.) ԵՊԻՍԿՈՍԵՍԻՍԻՍ
ԿՍ ԴԵԿԵՄԲԵՐ ԵԶԳԻՐԻՆԻՆԻ ՅՈՒՐԻՆ ԴՈՅՈՒՍԵՐԵՐԻ ՔՐԻՍՏԻԱՆՈՒՆԻՍՏԻՍ



ԴԱՅԻՆ
ԵՊԻՍԿՈՍԻՍ
ԿՍ ԴԵԿԵՄԲԵՐ ԵԶԳԻՐԻՆԻ
ՅՈՒՐԻՆ ԴՈՅՈՒՍԵՐԵՐԻ
ՔՐԻՍՏԻԱՆՈՒՆԻՍՏԻՍ

